

1810—20-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԴԿԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռ. Պ. ՆԱՆՈՒՄՅԱՆ

XVII—XVIII դդ., դարավոր աղետներից հետո, հայրենիքում և գաղթաշխարհում վերականգնված մտավոր և գրական շարժումները անցյալի քաղաքակրթության վերածնության և եվրոպական լուսավորությանը հաղորդակցվելու ձգտումներով համակված հայությանը տոգորում են ազգովին նորոգվելու և նրա զարգացումը պատմական նոր ուղիների վրա գնելու ձգտումներով: XIX դ. սկզբներին պատմական նոր իրադրության մեջ ընդլայնվում են ազգային գիտակցության շրջանակները, հոգևոր կյանքին հաղորդելով քաղաքացիական-հայրենասիրական, ազգային երազանքների նոր ազդակներ: Նոր դարի առաջին տասնամյակներին, կլասիցիզմի տիրապետության պայմաններում, հնդկահայ գաղութում, Կ. Պոլսի, Ջմյուռնիայի հայկական շրջաններում ըստեղծվում են առաջին գրական-հասարակական կազմակերպությունները, որոնք իրենց նոր պահանջներով դուրս էին գալիս կլասիցիզմի շրջանակներից, արձագանքում կյանքից եկող հասարակական նոր պահանջներին: Ի դեպ, ուրույն հետաքրքրություն է ներկայացնում մխիթարյան գիտնական Ղ. Ինճիճյանի՝ ժամանակի եվրոպական բանաստեղծության մասին արտահայտած մի կարծիքը, որն ինքնին հավաստում է կլասիցիստ գիտնականի գեղարվեստական ընկալումների մեջ գրական նոր ուղղության՝ ռոմանտիզմի հանդեպ նրա ակնհայտ հետաքրքրությունը: Բանաստեղծությունը «Ասկե ավելի կընե,— գրում է նա,— երբ որ մարդուս ներսի կիրքերը, բարկությունը՝ հպարտությունը, ասանկի ալ առաքինությունները կքաշե, որ ամենևին չեն երևնար, չէ թէ գուններով՝ հապա անանկ խոսքեր հնարելով, որ գույն չկրնալ քաշել, անհրեույթ բաներ աչքիդ դիմացը կըբեր մոլություն գունելու համար բան մը ընել կուտա, առաքինությունը ցանկալի, թե որ խրատ տալու ըլլա, ան պատվերքները, որ լեղի կերևնան մարդուս, բանաստեղծին խոսքովն կանուշնա»¹: Ղ. Ինճիճյանը ցանկանում է, որ մեզ մոտ էլ նման բանաստեղծ երևան գա. «Բանաստեղծությունն է աղեկը, որ բանը, իմաստը աղեկ ըլլա, գերազանց ըլլա, բառերուն աղվորությունը, շարվածքը բնականոն ըլլա, քաշկոտված, աղվորացնելու համար գրված չերևնա, որ քամահրելի կընե, համ չի բերեր»²: «Գրական երևույթներն ու ուղղությունները միանգամից բաց տարածության մեջ չեն ծնվում,— գրում է Ս. Սարինյանը,— նրանք իբրև նախադրյալ ունենում են մի որոշ մտածողական նյութ, գեղարվեստական մի որոշ սիստեմ, որից ելնում են»³: Հայկական ռոմանտիզմը 1820-ական թվականներին հատկանշված ժանրերի գեղարվեստական վերաձևումները կյանքի երևույթներն իմաստավորում է անհատների ներքնաշխարհի ամենատարբեր վերապրումներով: Հրապարակ է գալիս Հ. Ալամդարյանի ռոմանտիկական տարերքով համակված գրական նոր ուղղությունը՝ սենտիմենտալիզմը:

1820-ական թվականների II կեսին հայ գրականության մեջ ուրվագծվում է Մ. Թաղիադյանի բանաստեղծական կերպարը: Դեռևս Հայաստանում կառավարած շրջագալությունների ընթացքում գրի առած ժողովրդական զրուցյուններից, ավանդություններից ու երգերից նա տպագրության նպատակով ժողովածուներ է պատրաստում: Գրականության մեջ ժողովրդական բանավոր ստեղծ

1 Ղ. Ինճիճյան, Դարապատում, վերջին հատոր, Վենետիկ, 1827, էջ 60:

2 Նույն տեղում, էջ 61:

3 Ս. Սարինյան, Հայկական ռոմանտիզմ, Երևան, 1966, էջ 91:

ծագործության ներթափանցման առաջին փորձը Մ. Թաղիադյանի բանաստեղծություններն ու պոեմներն են, որ արտացոլում են բանաստեղծի գեղարվեստական ընկալումները՝ կյանքի հակասությունների վերհանման միջոցով։ Բանաստեղծական պատկերները, գրականության բովանդակության աշխարհականացման միտումները բացահայտում են գեղարվեստական նոր շափանիշների անխուսափելի պահանջը, որը պոեմներում հանգում է գրականության դեմոկրատացման, մարդու բնական իրավունքների բարձրացման, նրա անձնական-քաղաքացիական էության դրսևորմանը։

XVIII դ. վերանորոգման շրջանում առանձնակի տեղ է գրավում Հնդկաստանի Մադրաս քաղաքում 70-ական թվականներից ձևավորված մտավոր-գրական շարժումը։ 1794 թ. Մադրասում հիմնված առաջին հայ պարբերական «Ազդարարն» իր առաջնորդողներում ներկայացնում է հնդկահայ գաղութի քաղաքական ծրագրերը, որտեղ դրսևորվում է եվրոպական լուսավորությամբ և հայրենիքի ազատության գաղափարների սերմանումով ազգային ինքնուրույն կյանքի վերականգնմանը հասնելու ձգտումը։ Ներկայացնելով ազգի ողբերդական վիճակը՝ հնդկահայ գործիչները կոչ են անում լուսավորությամբ արթնացնել ազգի ոգին, գաղթաշխարհում ապրող հայերին հորդորում են վերադառնալ հայրենիք, օգնել նրա ազատագրմանը, սեփական հողում ներդնել իրենց կապիտալը, նպաստել երկրի տնտեսական բարգավաճմանը և մշակութային զարգացմանը։

Հայ մտավոր-գրական կյանքը XIX դ. սկզբներին նպաստում է հայ գրականության ազգային միտումների հասունությանը և հայրենասիրական ձրգտումների աշխուժացմանը։ 1809 թ. Մադրասում Պետրոս Բուռնազյանի թարգմանությամբ լույս է տեսնում Ֆրանսիացի գրող Ժան Ֆրանսուա Մարմոնտելի «Բելիսիարոս, յարացոյց անյիշաշարութեան» վերնագրով վեպը։ VI դարի բյուզանդացի կայսր Հուստինիանոսի զորավար Բելիսիարոսի սխրանքներով լի կյանքի պատմությունը հետաքրքրել է եվրոպացի հեղինակներին, որոնք նկարագրել են Բելիսիարոսի նկատմամբ բյուզանդական կայսեր կատարած կամայականությունները։ Մարմոնտելի ստեղծած վիպական թեման Բուռնազյանին գրավել է Բելիսիարոսի կերպարի մեջ հեղինակի ներդրած ժողովրդայնության հատկանիշների շնորհիվ։

Նույն թվականին Պ. Բուռնազյանը իտալերենից թարգմանում է «Թանգարան բարեգարդ հաւաքումն զուարճալի և քաղցրալուր բարոյական պատմութիւնք» վերնագրով երկհատորանոց ժողովածուն, որտեղ դրվատվում են բարերն ու գեղեցիկը, խորագրանվում է մարդկային կյանքը կործանող շարիքը։ Բարոյախոսական թեման XIX դ. առաջին կեսի գրականության մեջ շարունակվում է գերմանացի մանկագիր Բ. Շմիդտի գեղարվեստական գործերի թարգմանություններով։

1812 թ. Մադրասում հրատարակվում է Հակոբ Շամրյանի (Շ. Շահամիրյանի թոռնորդին) անգլերենից թարգմանած, Ֆրանսիացի մեծ դրամատուրգ Վոլտերի «Կեսարի մահը» ողբերգությունը։ Թարգմանության սկզբում տպագրված է ազգային-ազատասիրական տրամադրություններով համակված իտալական ազգային լուսավորական շարժման հայտնի գործիչ Ֆրանչեսկա Ալգարոտտի «Թուղթը»՝ ուղղված Ֆլորենցիայի նահանգապետին։ Ողբերգության մեջ ներկայացված Հռոմի սենատի ընդվզումը Կեսարի միապետական ձգտումների դեմ, արտացոլում է ինչպես առաջաբանի իտալացի հեղինակի, այնպես էլ ողբերգության հայ թարգմանչի հանրապետական միտումները։

Ժողովրդի և պետության հարաբերություններն են արտացոլված Ֆրանսիացի գրող Ժան Կլարիս Ֆլորիանի «Նումա Պոմպիլիոս» վեպում։ Հռոմի առաջին թագավորներից մեկի՝ գահի համար մղած պայքարի մեջ արտահայտված ժողովրդական միտումներն, անշուշտ, արձագանք են գտել և թարգմանչի մտայնության մեջ։

1820-ական թվականներին հայ գրականության մեջ թափանցում են սենտիմենտալիզմը և ռոմանտիզմի առաջին նշմարները։ Ինչպես այլազգի գրականությունների, այնպես էլ մերի մեջ ուրույն դրսևորումներով բացահայտվում

են կլասիցիզմից ռոմանտիզմին անցման ներքին բարդությունները: Մինչև և՛ Աբովյանի և նրա հանճարեղ վեպի՝ «Վերք Հայաստանի» հայտնությունը, հայկական կլասիցիզմի վերելքի շրջանում հնդկահայ գրական շարժման մեջ թափանցում են անգլիական ռոմանտիզմի առաջին արդյունքները: Դա մի հետաքրքիր ընթացք էր, որը բնականոն զարգացման պայմաններում կարող էր մեր գրականության մեջ գրական նոր շարժման սկիզբ դառնալ: Բայց դա տեղի չունեցավ հնդկահայ գաղութի հասարակական ուժերի ջլատման, գրական կյանքի սահմանափակման հետևանքով:

1810-ական թվականների վերջերին հնդկահայ մտավորականների մեջ ցանկություն է առաջանում կազմակերպելու ազգային ուսումնական բարձրագույն հաստատություն, կրթական-լուսավորական գործունեություն ծավալող ընկերություններ: 1817 թ. հասարակական գործիչ Մ. Սմբատյանը իր հրատարակած «Հրավիրակ» գրքույկում ներկայացնելով հայ ժողովրդի անցյալի համառոտ պատմությունը, անդրադառնում է ներկա տխուր վիճակին, կոչ անում արթնանալ «մահահրավեր քնից», հիշել անցյալի փառքը: Նա կոչ է անում հնդկահայ հարուստներին ստեղծել ընդհանուր դրամարկդ, դպրոցների և տպարանի կազմակերպման համար հրատարակել թերթ, գրքեր: Այդ ուղիով 20—30 տարվա մեջ հայ ազգը կրկին ձեռք կբերի իր «լուսավայլությունը», կմտնի այսօրվա քաղաքակիրթ ժողովուրդների շարքը:

1820 թ. Կալկաթայում հրատարակվում է «Հայելի կալկաթյան» անունով շաբաթաթերթ, որը բովանդակում է պէսպէս լուրեր, քաղաքական, վաճառականական, թարգմանությունք անգլերենից և նիւթեր ազգային կյանքին: Թերթը նախատեսում է հրատարակել «վէպք, գրականութիւն» և այլն: Բայց դժբախտաբար այդ շաբաթաթերթը շատ կարճ կյանք է ունենում: Այնտեղ տպագրված բանաստեղծություններից մեկը՝ «Դարձիր սէր իմ» վերնագրով արտատպվել է «Շտեմարանում», մյուսը՝ «Տէր կեցոն»՝ Թաղիադյանի «Ազգասերում»: Մ. Նալբանդյանը, իբրև «ազգային հիմն», ուշադրություն է դարձրել և բարձր գնահատական տվել «Տէր կեցոն»-ին:

«Շտեմարանը» տպագրվել է 1822 թ.: Նրա հազվագյուտ օրինակներից մեկը գտնվում է Հայաստանի հանրային գրադարանի անձնակազմի Ֆոնդում: Շաբաթաթերթի խմբագիրը դպիր Մ. Մկրտչյանն է՝ կալկաթահայ հասարակության առաջավոր թևի ներկայացուցիչներից մեկը: 1821 թ. նա հրատարակել է «նտրադիմայ դժոդութեան» վերնագրով մի կատակերգություն, որը մինչ այդ երեք անգամ խաղացվել էր, և այդ առթիվ «Շտեմարանի» խմբագիրը մի շարք հոդվածներ և գրախոսականներ է տպագրում՝ ներկայացնելով պիեսի հասարակական արձագանքները: «Շտեմարանում» տեղ են գտնում կալկաթահայ հասարակական կյանքի ներքին հարաբերությունները, հատկապես հակամարտությունները պատկերող իրադարձությունների նկարագրություններ: Խմբագիրը հետևում է հայրենիքի ազատագրական շարժմանը, միաժամանակ հույն ժողովրդի՝ օսմանյան լծի դեմ տարվող պայքարին: Ըթն մենք էլ ցրված լինեինք, գրում է նա իր հոդվածներից մեկում, ազգասիրության, հայրենասիրության եռանդ լինել հայկազյան երիտասարդների մեջ և նրանք լինեն կիրթ քաղաքականապես և ուղեւորականապես, կարելի կլինի թափաման լծոյ»: Նա ներբող է ձեռնում հույներին և իր ժողովրդի արևմտահայ հատվածի ազատագրության հույսերը կապում նրանց շարժման հաջողության հետ:

Հարուստ է «Շտեմարանի» գրական բաժինը: Այստեղ տպագրվող չափածո ստեղծագործությունների մեջ քիչ տեղ է հատկացված կրոնական բնույթի ոտանավորներին, հոգևոր քարոզներին: Դրա փոխարեն բավական թիվ են կազմում ժողովրդական զրույցները, երգիծական ոտանավորները, աշուղական երգերը: Այստեղ տեղ են գտել հասարակական տարբեր խավերը ներկայացնող քննադատական ակնարկներ, հոգևորականների հոռի բարքերը պա-

4 Տե՛ս Շտեմարան, 1822, էջ 529 (այսուհետև «Շտեմարանից» բերվող մեջբերումներին և բանաստեղծություններին էջերը կտրվեն բնագրին կից):

խարակող գործեր: Թաղիադյանն իր «Ազգասերում» հավանաբար «Շտեմարանից» է որոշ շտկումներով արտատպել «Գանգատ սկեսուրից», «Պարսավ», «Ծրկու գողալ տեսի» երգիծական ոտանավորները:

«Շտեմարանում» առանձին հետաքրքրություն են ներկայացնում քնարական բանաստեղծությունները: Խմբագիրը հատուկ ուշադրություն է դարձնում այդ ժանրի ստեղծագործություններին: Նա ունի իր սեփական կարծիքը: Քնարական բանաստեղծությունն իր բովանդակությամբ չպետք է դուրս գա բարոյակրթության, բարոյախոսության շրջանակներից, այն պետք է հեռու լինի սիրային բոլոր տեսակի «գայթակղություններից», արտահայտությունների մեջ լինի պարկեշտ և խոհեմ, տուրք չտա զգացմունքներին:

Բայց ահա երիտասարդ գրասերների և բանաստեղծների մոտ այդ շրջանում ազատախոհ արամադրությունների հետ նկատելի է բուռն հետաքրքրությունը դարասկզբից հասունացող անգլիական ռոմանտիկական բանաստեղծություն հանդես: Այդ ստեղծագործությունների մեջ նրանց գրավում է կաշկանդումներից ազատ, հոգեկան աշխարհի ներքին շերտերը բացող, զգացմունքներով առատ բանաստեղծությունը: Եվ «Շտեմարանի» խմբագիրը նամակներ է ստանում, որոնց մեջ երիտասարդներն առաջարկում են անգլիական ռոմանտիկներից թարգմանություններ տպագրել:

Մկրտչյանը բոլոր դեպքերում ընտրություն է կատարում, աշխատելով շատ չխախտել իր սկզբունքը: Նա տպագրում է «Ծրգ» վերնագրով մի բանաստեղծություն, որտեղ բանաստեղծը գերված է իր սիրո առարկայով և հայտնում է, որ իր տառապանքները հասել են ծայր աստիճանի:

Բանաստեղծության վերջում խմբագիրն անում է հետևյալ դիտողությունը. «Հրապուրումն սիրո՝ թէ չիցէ շարժեալ յառաքինութենէ արհամարհիմ. թող հրապուրողք և հրապուրեալք այլ և այլ առթից արշաւեսցեն մինչ ի վաստակիլ» (խմբագիրն այստեղ և այլ տեղերում ստորագրում է՝ Վ. Տ.՝ վերատեսուչ Օճանասփյուռյան տպարանի): Նա այն կարծիքին է, որ սերը պետք է մարդուն բարիք բերի և ոչ թե նրա հոգին տառապանքի գերի դարձնի: Հետագայում Մկրտչյանը ավելի է հստակում իր մտքերը բանաստեղծական ուղղությունների և բովանդակության վերաբերյալ: Առիթը դառնում է «Դարձիր սէր իմ» բանաստեղծությունը, որը տպվել էր «Հայելի կալկաթյան» թերթում, «Աֆրոդիտե» ստորագրությամբ: Խմբագիրը մի երկար քարոզ է կարդում ըզգացմունքների չափավորության մասին. «Ուրախ կլինեմ հեղինակն հաճենա մին-մին բացահայտություն տալ իմ հարցմանցն՝ թէ արդե՞ր ինքն տակավին նույն վշտումն մնա, թէ՞ առավելագույն կամ նվազե յուր վիշտն... Գիտեմ ընթերցողացս միակն կկամենա գիտել, թե ի՞նչ հայացքայ որ գձելամ, ասեմ, սովավ կամեմանամ հեղինակի սենթիմենթն հրատարակել: Եթէ ինքն բավարարեցուցիլ պատասխան չտայ, յայնժամ կրկին դիտողություն կանեմ վասն բավարարության» (էջ 716):

Մկրտչյանը ծանոթ է եվրոպական գրական նոր ուղղություններին, ուստի այս բանաստեղծության մեջ նկատած սենտիմենտալ վերապրումները նրան հաճելի չեն: Խմբագրի դատողությունները հիշեցնում են 1821 թ. կալկաթայում հրատարակված Մ. Աղանուրյանի «Հրիտակ հօր ուրումն առ դստեր իւր» վերնագրով մի թարգմանության մեջ իտալացի հեղինակի արտահայտած մըտքերը: Սերը, հեղինակի կարծիքով, մարդուն չպետք է մոլորեցնի և տեղի տա ծանր ապրումների, պետք է լինել ողջախոհ և զգույշ, չգայթակղվել, պահպանել մարդկային արժանապատվությունը: «Շտեմարանի» խմբագիրը մնում է բանականության և զգացմունքների ներդաշնակման իր դավանանքին հավատարիմ: Բայց նա ի վիճակի չէր կանխել նորարարությամբ համակված երիտասարդ ստեղծագործողների և թարգմանիչների մոլուքը նոր գրականություն: Իր շաբաթաթերթում նա տպագրում է Աթենասի, Հիմենոսի, Ջովինիսի և այլոց բանաստեղծական թարգմանությունների մի ամբողջ շարք: Այս թարգմանությունների աղբյուրների ուսումնասիրությունն, անշուշտ, կօգնի

1820-ական թվականներին հայ գրականության նոր ուղղության՝ ռոմանտիզմի, ներթափանցումների հաստատմանը:

«Շտեմարանի» էջերում սիրային բանաստեղծությունների շարքում հանդիպեցինք մինչև այժմ ուշադրության չառնված գրական մի հետաքրքիր բանավեճի: Նորարար բանաստեղծության հետևորդներից մեկը՝ Հիմենոս ծածկանունով, խմբագրին ուղղած նամակում հետևյալ առաջարկությունն է անում. քանի որ մոտենում է հարսանիքների ժամանակը, անհրաժեշտ է շաբաթաթերթի էջերում տեղ տալ սիրային բնույթի այնպիսի բանաստեղծությունների, որոնք պատկերում են ոչ միայն երջանիկ սիրահարներին, այլև սիրո զոհերին, նրանց կրած անհույս ապրումներն ու տառապանքը: Այդ նամակում Հիմենոսը Շեքսպիրի «Վերոնիկայի երկու ազնվականներ» կատակերգությունից մեջբերում է մի հատված, որտեղ անգլիացի հռչակավոր դրամատուրգն իր հերոսների միջոցով վեր է հանում զգացմունքների ազատ արտահայտման անհրաժեշտության գաղափարը:

Հիմենոսի նամակն արձագանք է գտնում «Շտեմարանի» էջերում: Հանդես է գալիս Բեչլըր ծածկանունով խմբագրի համակիրներից մեկը և առարկում է սիրային բանաստեղծության մեջ զգացմունքների ազատ արտահայտման դեմ. «նախ հուսահատ սիրահարաց հոգունակությունը չեմ արհամարելից, թէ ուղղություն լինի հարկիվ» (էջ 376): Անհաջող սերը մասնավոր բնույթ է կրում, ռուսի լի: կարող բանաստեղծության նյութ դառնալ: Խմբագիրը պատրաստ է համարում միջամտել սկսված վեճին: «Սա էսքան միայն կասեմ,— հայտարարում է նա,— որ երկքի դրվածքն, եթէ դիտավորական նյութ բանիս քննվի բարվոք խրատա վասն հասարակության: Հուսամ, որ մի օգտավետ առարկություն համարվի զգուշության, ով որ ենթակա լինի սուլյանման գործողության (էջ 381):

Վեճը շարունակվում է շաբաթաթերթի 404, 445, 493, 505 էջերում: Հիմենոսը, հանդիսավոր տեսք տալով իր առարկումներին, հղում է հին հունական սիրերգականներին և նորից անդրադառնում Շեքսպիրին: Նա խորհուրդ է տալիս ուսումնասիրել և՛ հույներին, և՛ ժամանակակից բանաստեղծներին՝ հասկանալու համար անձնական քնարերգության նոր պահանջները: Վեճն ընդհատվում է առանց կողմերի համաձայնության:

«Շտեմարանի» էջերում հանդես եկած նոր բանաստեղծության հետևորդներին մենք հանդիպում ենք 1810-ական թվականների կալկաթահայ մտավոր շարժման մեջ: Այդ շարժման առջևից գնացող գործիչներից էին Պ. Բուռնազյանը, Շամրյան եղբայրները, Ավ. Զնիվումյանը, Մն. Սմբատյանը, Հորդանանյանը, Հար. և Մկր. Աղանուրյանները, Հար. Աղանուրյանի որդին՝ Հովհ. Աղանուրյանը, Հովհ. Ավդալյանը և ուրիշներ:

1819 թ. Հովհ. Աղանուրյանը հրատարակում է մի փոքրիկ ժողովածու՝ «Արտոյտ որ է տալիղ տրտմահալած» խորագրով: Այստեղ նա զետեղում է 30՝ բանաստեղծություն՝ ինչպես ինքնուրույն, այնպես էլ թարգմանություն: Արտույտը Հայաստանի երգախոս թռչուններից է: Իր հայրենիքը չտեսած բանաստեղծի անձնական սերը ձուլվում է հայրենիքի սիրուն: Ժողովածուի բանաստեղծությունները գրված են կլասիցիստական ոճով: Սակայն, ինչպես նշում է Հովհաննեսի մասին տեղեկություններ հաղորդող Հ. Իրազեկը, այդ բանաստեղծություններն իրենց հետ բերում են մարդկային զգացմունքների դրսևորման նոր երանգներ⁵:

Հետաքրքիր է 1819 թ. գրված, Գալուցյան դպրոցի նորավարտ աշակերտ, Իմաստախնդրյան միաբանության հիմնադիրներից մեկի՝ Հովհ. Ավդալյանի, ձեռագիր մի տետրակը՝ «Նուագարան, յորում պարունակին պէսպէս ընտրելազույն կամ երգք, տաղերգութիւնք, հանգերգութիւնք, օրհներգութիւնք, գանձք» վերնագրով⁶: 1823 թ. Ավդալյանը հրատարակել է «Մշտիկ» վերնա-

⁵ Տե՛ս Հ. Իրազեկ, Հնդկահայ տպագրության պատմություն, Անթիլիաս, 1986, էջ 81:

⁶ Տե՛ս Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագրերի ֆոնդ, № 7654:

պրոպ մի ժողովածու՝ 56 էջից բաղկացած: Այն չկա մեր գրադարաններում: Արդյոք «Նուագարանի» տպագրությունը չէ՞ սա:

Բանաստեղծը խորապես ապրում է միջավայրի հետ կոնֆլիկտից առաջ եկած սուր հակասության զգացումը: Հայրենիքում իր շրջապատի մարդիկ դավել են նրան և ստիպել հեռանալ իր ծննդավայրից, բաժանվել սիրուհուց, օտար ափերին ապաստան որոնել:

Օտարության մեջ բանաստեղծն ապրում է սիրելի էակից և հայրենիքից բաժանման սուր ցավը: Սիրուց խոցված սիրտը սպեղանի է որոնում ցավերը մեղմելու համար: «Աշտէիւ հարեալ», «Բոցով կիզեալ» բանաստեղծությունները մեջ նա սիրեցյալին խնդրում է հասկանալ իր ապրումները, մտնել իր սրտի խորքը, տեսնել վերքերը և «սիրո դեղերով» բուժել: Սիրուհուց բաժանվելուց հետո աշխարհը բանաստեղծի համար կորցրել է իր իմաստը:

Բանաստեղծն իր խռովահույզ հոգին համեմատում է բնության տարերքի՝ օվկիանոսի ահեղաշունչ հողմերի և խավարածածկ ամպերի հետ: Սակայն նա սրտի տրոփյունով սպասում է փոթորկի դադարին, երբ բացվում է հեռավոր հորիզոնը, նրա հետևում՝ իր երազների հանգրվանը:

Այսպիսով, 1819 թ. տպագրության համար պատրաստած «Նուագարան» ժողովածուով Ավդալյանը XIX դ. առաջին տասնամյակների հայ պոեզիան ազատում է կրոնական շղարշով պատած կլասիցիստական բանաստեղծության կաշկանդումներից և քնարական հերոսի ներաշխարհի ինքնաբացահայտումով նոր ուղի է բացում մեր գրականության մեջ ռոմանտիզմի առաջին քայլերի համար:

Ավդալյանի՝ 1821 և 1826 թթ. եվրոպական արձակ գրականության էջերից կատարած թարգմանությունները մեր գրական կյանքում երևան եկած տեղաշարժի նոր արտահայտություններն են: Խոսքը վերաբերում է անգլերենից թարգմանած և իր կողմից վերնագրած «Անգիտաց անպէտ» ժողովածուին: Բանաստեղծն այդ վերնագրով կամեցել է ցույց տալ, որ իր թարգմանությունները ամենքին կարող են դուր չգալ և չհասկացողների համար լինել «անպետ»: Մինչդեռ հայ նորարար հեղինակը անհրաժեշտ է համարել հատուկ ընտրությամբ հնդկահայ հասարակությանը ներկայացնել XVIII դ. վերջի և XIX դ. սկզբների անգլիական լուսավորիչ և ռոմանտիկ գրողների ստեղծագործություններից՝ ժողովրդական կյանքից առնված պատկերներ, որոնց մեջ ներկայացվում են հասարակ մարդկանց կենցաղը, նրանց հոգսերն ու դժվարությունները: Դրանք կյանքի տարբեր կողմերի և մարդկանց անհատական բնավորությունների գեղարվեստական ցուցադրումներ են, որոնց մեջ երևում են սոցիալական հակասությունների մեջ իրենց ինքնությունը պահպանող անհատների, ժողովրդի ինքնապահպանման ձգտումները, հակասությունների դեմ պայքարելու ներքին ուժերը:

«Ի հրահանգութիւն և ի զբօսանս համբակաց» նախաբանում Ավդալյանը գրում է, որ, խորապես ծանոթ լինելով եվրոպական գրողներին, նախանձով տեսել է, թե որչափ իմաստություն կա նրանց գործերում և որոշել է թարգմանություններ կատարել նրանց համար, ովքեր ձգտում են բանիմացության՝ ի հակակշիռ «անգետների»: «Անգիտաց անպէտը» բաղկացած է տարբեր ժանրերի 94 ստեղծագործություններից՝ հոդվածներ, պատմվածքներ, խրատական խոհեր, խորհրդածություններ և այլն:

1826 թ. Ավդալյանը թարգմանում և տպագրում է այն ժամանակ արդեն մեռած ունեցող Շատոբրիանի հայտնի եռագրությունից «Աթալա, երկու վայրենիների սեր» վիպակը (Ավդալյանը փոխել է վերնագիրը՝ «Աթալա կամ օրիորդն սիրազոհ»): Գրքի սկզբում Ավդալյանը ներկայացնում է Շատոբրիանի կենսագրությունը՝ բարձր գնահատելով Ֆրանսիական վաղ ռոմանտիզմի առաջին ներկայացուցչի արվեստը:

Նույն տարին Ավդալյանը տպագրում է անգլիացի հեղինակ Սամուել Ջոնսոնի «Հռասնելաս արքայորդին Եթովպիոյ» վիպակը: Եթովպիայի արքայորդին դուրս է գալիս «Երջանկության կղզուց»՝ աշխարհում որոնելու իսկական երջանկությունը: Նրա ջանքերը չեն արդարանում: Նա վերադառնում է այն համոզումով, որ մարդը չի հասել իրական երջանկության: Ավդալյանն իր թարգմանությունը կցել է մի ընդարձակ առաջաբան, ուր գրում է, թե հայ գրական ասպարեզում շատ քիչ են վիպական գործեր, որոնք մարդու բնավորության դաստիարակության հարցում մեծ նշանակություն ունեն: Ուստի, կամենալով իր սիրելի ազգին նման երկերի քաղցրության «ճաշակ տալ», նա մատուցում է «Հռասնելասը»: Այդ վիպակը, գրում է Ավդալյանը, ներկայացնում է մարդկային կյանքի տարբեր վիճակները «հայելու մեջ»: Երջանկության հասնելու համար շատ ճիգեր են պետք, քանի որ՝

Աղքատ և փարթամք միապես տանջին,

Առիթ տանջանաց միայն տարբերին,

Աղքատը տանջի առ կարեաց անձին,

Փարթամն տանջի առ հոգւոյ վշտին:

Գրական նոր ուղղության՝ ռոմանտիզմի, հայ գրականության մեջ ներթափանցելու առաջին քայլերն ինքնին ձևավորում են քննադատական մտքի, գրական-գեղարվեստական հայացքների մի քանի բնորոշ գծեր, որոնք բխում են գեղարվեստական երկի հասարակական արժեքը իմաստավորելու և գնահատելու նոր ըմբռնումներից:

XIX դ. առաջին տասնամյակներին հայ նոր գրականության հատկանիշների ձևավորման մեջ իր ուրույն տեղն է գրավում գրականության մեջ ժողովրդական բանավոր ստեղծագործության ներթափանցման բնական ընթացքը: 1930 թ. Նոր Զուղայում Ա. Երեմյանի հրատարակած «Փշրանքներ ջուղահայոց և հնդկական բանահյուսությունից» գրքույկը լավագույն օրինակներից է նախորդ դարի ավանդները յուրացրած, XIX դ. սկզբներից գրական կյանք մտնող ժողովրդական բանահյուսության մեջ տեղի ունեցած որակական փոփոխությունների: Դրա ընտիր արտահայտություններից է նաև 1830 թ. Կալկաթայում հրատարակված «Սիրակարկաչ, որ է հանդիսարան հայոց, պարսից և հնդկացվոց երգեր»^{*} ժողովածուն, որը կազմել է Ստեփան Ավետյանը: Մինչև ժողովածուի նյութերը քննության առնելը նշենք հետևյալը:

1933 թ. Նոր Զուղայում, մի գրասեր հայի ընտանիքում պարսկահայ գրականագետ Արամ Երեմյանը հայտնաբերում է 1824-ի թվագրությամբ բանաստեղծությունների մի ձեռագիր ժողովածու՝ «Սիրակարկաչ որ է հանդիսարան հայերեն, պարսկերեն, հնդստանցերեն երգոց» վերնագրով: Ա. Երեմյանը դա համարում է անտիպ գործ և մանրամասն նկարագրում այն⁷: Սակայն հետագայում պարզվում է, որ այդ ժողովածուն Ստեփան Ավետյանի կազմածն է:

Ժողովածուի նախաբանից երևում է, որ Ավետյանը ցանկացել է հնդկահայ հասարակությանը ներկայացնել տարբեր աղբյուրներից հավաքած մի երգարան, որի մեջ տեղ են գտել նաև ինքնուրույն բանաստեղծություններ, թարգմանություններ: Նախ նշենք, որ ժողովրդական երգերի հավաքումն ու տպագրությունը նպատակ ունին հայրենիքից կտրված հայ հասարակության մեջ պահպանել հայերենը և հայրենական ավանդները: Ավետյանը զետեղել է բավական քանակությամբ պարսկերեն և հնդկերեն երգեր, հայերեն տառերով տպված, որոնց թարգմանությունն ու տպագրությունն, անշուշտ, մեծ հետաքրքրություն կարող են առաջացնել բանահյուսությամբ զբաղվողների մեջ:

Ժողովածուում տեղ գտած ժողովրդական երգերն ու անձնական բնույթի քանաստեղծությունները գերազանցապես անստորագիր են, վերցված տարբեր աղբյուրներից: Դրանք չունեն ո՛չ Ավդալյանի՝ իրականության բախումից

^{*} Այսուհետև՝ ժողովածուից արվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից:

⁷ Բաղմավեպ, 1965, № 2, էջ 24—33:

առաջացած փոթորկոտ ընդվզումները, ո՛չ Ալամդարյանի սիրո ողբերգական-
հրանգները: Ժողովածուի բանաստեղծություններում տիրապետողը մարդկա-
յին շարությունից և դաժանությունից առաջացած դժգոհությունն է, որը ճեղք-
վածքներ է առաջացնում մարդու հոգում: «Արի, բախտ իմ» բանաստեղծու-
թյան մեջ պատկերվում է անհատի հեռացումը մարդկանցից.

Այսպես մաշի խղճուկ անձն իմ,
Զի ոչ օգտի ջան րժշկաց,
Ով անգութ թշնամի իմ,
Այժմս խնդա և տւրախ կաց (40—41):

Նա ավելի լավ է համարում լինել աղքատ, հալածված, քան տանել տե-
րերի անարգանքն ու հալածանքները: «Ընդունայն աշխարհ» բանաստեղծու-
թյան մեջ նա ասում է.

Ընդունայն աշխարհ գիտեմ հաւաստեալ,
Զի քաղցր տես քոյ լի է շարութեամբ,
Վասն այդ ի սրտի փափագիմ մահու,
Զի զերծեալ ի քէն մնամ դիւրութեամբ (31—32):

Բանաստեղծը լավ է համարում հեռանալ իր շրջապատից և բնության
զրկում գտնել անդորրություն, բայց սիրուհուց ինդրում է շմոռանալ իրեն.

Միրտս կիզեալ ուժգին բոցով,
Նս սիրոյ քոյ մնամ լալով,
Մի մոռանա իմ սիրելի (32):

«Կէնաց ի յոյս», «Միայնակ շրջիմ», «Գէթք երագի» բանաստեղծություն-
ների մեջ արտահայտված են մեծություն պահանջող առաջացած զգացումներ:
Հեղինակի հոգեկան աշխարհը խռովված է: Կյանքի և սիրուհու կարոտը մա-
շում է նրան: Նա նորից դիմում է սիրուհուն.

Խղճայ ինձ, դու, դաւար հասակիս,
Պատճառ սիրոյդ վհատեալ է հոյժ,
Միայնակ շրջիմ նման տատրակի,
Միայնակցութեանս դու լինիս բոյժ (30):

Ժողովածուում գետնից ժողովրդական երգերի և անձնական բնույթի
բանաստեղծությունների մեջ կարելի է տեսնել կյանքի հակասությունների,
բարու ու չարի մասին դրսևորած խոհեր, սիրո հավերժական ուժի, աշխարհի-
ունայնության վերաբերյալ ավանդական դատողություններ ու ընդհանրացում-
ներ, ինչպես՝

Ով բարեկամ երեսպաշտ և նենգաւոր թունալի,
Մի մոռանար զսէրն քո՝ մինչ դու իցես յաշխարհի,
Ով բարեկամ ընտանի, չար, նենգաւոր ու թունալի,
Մի մոռանար զմահն քոյ մինչ իցես դու աշխարհի... (73):

Բանաստեղծական պատկերներ են նկարագրված «Հողմն սիկ սիկ», «Խո-
սեաց ճիկ ճիկ» բանաստեղծություններում, ինչպես նաև բանաստեղծի վե-
րապրումները բնության անդորրության մեջ և ահեղաշունչ փոթորկի պահե-
րին: Բոլոր դեպքերում նրան ձգում է կյանքը:

«Միրակարկաշ որ է...» ժողովածուում մեզ համար հայտնություն էր Բայ-
րոնի մի բանաստեղծությունը: Թարգմանիչը չի հիշատակում ոչ անգլիացի
բանաստեղծի և ոչ էլ իր անունը: Մեզ հաջողվեց այն գտնել Լենինգրադում՝
1967 թ. հրատարակված «Литрика» վերնագրով Բայրոնից թարգմանված բա-
նաստեղծությունների փոքրիկ ժողովածուում: Մեզ հայտնի չէ, թե ուսերեն,
բանաստեղծությունն իր ճշտությամբ և գեղարվեստական կատարումով որ-
քան է հարազատ բնագրին: Նույնը կարող ենք ասել և հայերեն թարգմանու-

թյան մասին: Բայց կարևորն այս դեպքում Բայրոնի հայտնությունն է «Սիրակարկաչ որ է...»-ում:

Բանաստեղծությունը գրված է 1813 թ., ունի երկու տուն՝ «Մնունդ սիրո» և «Վերնագրով (ռուսերեն տարբերակը՝ «О происхождении любви»):

Սիրո ծնունդ ոհ էր յինէն
Զայդ ժանտ խնդիր հարցուկործեալ,
Երբ յայս բազում կարդաւ քեղէն,
Ոստնու ի կեանս զքեզ տեսեալ:
Եթէ զիւր վերջ խնդրես դիտել,
Ահա նախատէս սիրտս գուշակ է,
Ի լուռ վիշտս ձիգ անի վազել,
Բայց մինչ ցաւարտ շնչոյ կեցցե (30):

Ս. Ավետյանի «Սիրակարկաչ որ է...» ժողովածուն Մ. Թաղիադյանը վերահրատարակել է 1846 թ. «Նուագարան զբոսանաց» վերնագրով: Գրքույկի նախաբանում նա գրում է, որ այդ «Երգարանի» հրատարակության անհրաժեշտությունը զգացվում է հնվահայ հասարակությանը հոգևոր սնունդ տալու համար:

Ս. Ավետյանի ժողովածուում գտնում ենք Թաղիադյանի «Մեսրոպեան աշնան առաւօտ», «Առ զավել», «Առ զամբիւղ» բանաստեղծությունները: Առաջին բանաստեղծության տարբերակներից մեկը գտանք Գրականության և արվեստի թանգարանի Ախվերդյանի ֆոնդում, 84 թվահամարի տակ: Նույն տեղում պահվում է նաև Թաղիադյանի գրած մի այլ բանաստեղծություն՝ «Գարնան առաւօտ» վերնագրով: «Սիրակարկաչ որ է...»-ում տպագրված երկրորդ և երրորդ ոտանավորները գուցե թարգմանություններ են:

Կալկաթայում գտնվելու առաջին տարիներին, ինչպես նշեցինք, Թաղիադյանը հրատարակության նպատակով կազմած է եղել բանաստեղծությունների մի ժողովածու, որի բովանդակությունը մեզ հայտնի չէ: 1823 թ. ներսեւ Աշտարակեցուն ուղղած սևագիր նամակի յուսանցքներում Թաղիադյանը իր օրագրից արտագրել է 1825 թ. Կալկաթայում գրած մի երկաթաշունչ ոտանավոր՝ «Անցք» վերնագրով, որտեղ պատմում է իր ստեղծագործական կյանքում տեղի ունեցած շրջադարձի մասին: Բանաստեղծությունը գրված է կլասիցիստական ոճով: Գլխաւոր հերոսն ինքը՝ բանաստեղծն է: Կանգնած է ահա երկճյուղ ճանապարհի առջև: Նրա խոհերի և զգացմունքների արտահայտիչներն են «Սիրտը», «Հավատը», «Ավետարանը»:

Ո՛ւր իցեմ, ո՛ւր խնդրեմ, ընդունայն
Զլաւ անուն ի հովտիս տրտմութեան,
Ո՛ր անփորձ կորութեանս ի նշան
Փորձ դնէ իմ անփորձ կորստեան¹⁰:

Թաղիադյանի՝ իր ստեղծագործական ուղին որոշելու վերաբերյալ դատողությունները հանգում են կյանքի ճշմարտությունը որոնելու և դժվարությունները հաղթահարելու անհրաժեշտության գիտակցության: Կողմնորոշվելով դեպի ստեղծագործական նոր ուղիները, բանաստեղծը գտնում է կյանքի վերարտադրության իրեն հուզող հարցերի պատասխանները:

...Յրեցի զցնորս վարանման
Եւ երկիւղ մոտալուտ կորստեան,
Քանզի փառքն՝ զոր տեսի հեռաստան,
Փարատեաց զմռայլս մթութեան¹¹:

⁸ Տե՛ս նաև Ռ. Ն ա ն ու մ յ ա ն, Մեսրոպ Թաղիադյան, Երևան, 1947, էջ 113—114:

⁹ Տե՛ս Մ. Թ ա ղ ի ա դ յ ա ն, Ուղեգրություններ, հոգվածներ, նամակներ, վավերագրեր, Թբլեան, 1975, էջ 572:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում, էջ 576:

1820-ական թվականների երկրորդ կեսին նրա գրած բանաստեղծություններից մեզ հասել է մի քանի կտոր միայն: 1830 թ. սեպտեմբերի վերջին, Դաթա կատարած ուղևորության ընթացքում, Թաղիադյանը ճանապարհին սրբագրում է Կալկաթայի Եպիսկոպոսական ճեմարանի տպարանում իր տպագրելիք գրքերի մամուլները՝ իր «Դիցաբանությունը», Սամվել Անեցու «Ժամանակագրությունը» և իր բարեկամ Խ. Սարգսյանի թարգմանած՝ Զոնսոնի «Վեկֆիլդի երեցը»: Հայտնի է, որ «Դիցաբանությունը» լույս է տեսել 1830-ին՝ հայրենիք վերադառնալու նախօրյակին: Նա մեծ դժվարությամբ է փակել տպարանի ծախսերը: Երկրորդ գրքի տպագրության մասին գրականության մեջ ոչ մի ակնարկ չկա: Հավանաբար, այն լույս չի տեսել, այս անգամ տպարանի ծախսերը փակել չկարողանալու հետևանքով: Թաղիադյանն արդեն դուրս էր եկել Կալկաթայից և գործն այդպես էլ մնացել է տպարանում կիսակատար: Ինչ վերաբերում է երրորդ գրքին, Թաղիադյանը չի հավանել իր բարեկամի թարգմանությունը, արել է բազմաթիվ ուղղումներ և, հավանաբար, այդ պատճառով էլ, գուցե հենց թարգմանչի միջամտությամբ, գիրքը լույս աշխարհ չի եկել:

1810—1820-ական թվականների հնդկահայ գրական շարժման պատմության այս համառոտ շարադրանքը միայն ընդհանուր պատկերացում է տալիս շարժման ընթացքի և նրա մեջ կլասիցիզմից ռոմանտիզմին անցման մի քանի երևույթների մասին: Այդ ընթացքը բնորոշող, հետազոտության ենթակա գրական նոր երևույթներն, անշուշտ, կրնդային այդ նոր շարժման կարևոր դերը և XIX դ. առաջին տասնամյակների հայ գրականության և քննադատության ուսումնասիրության շրջանակները:

ИЗ ИСТОРИИ ЛИТЕРАТУРНОГО ДВИЖЕНИЯ ИНДО-АРМЯН В 1810—1820-х гг.

Р. П. НАНУМЯН .

Резюме

При расцвете классицизма (первая четверть XIX в.) рождались первые ростки романтизма. Известный деятель просветительского и литературного движения того времени О. Авдалян в 1819 г. составляет первый сборник стихов, где отвергая нормы классицизма, выявляет внутренний мир личности и его конфликт с действительностью. Авдалян является одним из первых переводчиков английского стихотворения.

В 1821—1823 гг. в Калькутском издании «Штемаран» печатается дискуссия о лирике, где защищаются личные чувства человека.

Составитель сборника «Сиракаркач» вместе с народными песнями печатает любовные стихотворения, переводимые с английского языка, в том числе «Происхождение любви» Дж. Байрона.

До сих пор не изучены переводы английского романтического стихотворения на армянский язык, изучение которых даст новую оценку литературного движения того времени.